

**«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ** Հուզականային ոլորտի գնահատումը ն/դ տարիքում

*Կատարող՝ Տայալե Ղազարյան*

*Ղեկավար՝ Կ. Գևորգյան*

**Երևան 2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3**

**ԳԼՈՒԽ 1.** ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ՀՈՒՉԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՉԱՐԳԱՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ, ԾՆՈՂՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

**1.1.** Նախադպրոցական տարիքի ընդհանուր հոգեբանական բնութագիրը.....4

**ԳԼՈՒԽ 2.** ՀՈՒՉԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ Ն/Դ ՏԱՐԻՔՈՒՄ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

**2.1.** Ն/դ տարիքի երեխայի հուզականային ոլորտի զարգացումը սոցիալական միջավայրում.....6

**2.2.** Ն/դ տարիքի երեխաների հուզական և սոցիալական զարգացման հիմնական չափորոշիչները.....9

**ԳԼՈՒԽ 3.** Ն/Դ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՒՉԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԵՎ ՄԻՉԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

**3.1.** Ձեռնոցներ.....14

**3.2.** Ութ գույն ունեցող ծաղիկը.....15

**3.3.** Թիթեռներն իմ ստամոքսում (Լ.Լոուենշթեյն).....16

**3.4.** Կյանքի քարտեզ.....17

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....18**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19**

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....20**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր տարիքային փուլում երեխայի մոտ առաջանում են որոշակի պահանջմունքներ: Հոգեկանի զարգացման խախտումները խանգարում են այդ պահանջմունքների բավարարմանը: Հետևաբար, հոգեկան առողջության հիմքը, օնտոգենեզում երեխայի լիարժեք զարգացումն է:

Ն/դ տարիքում առաջատար է խաղային գործունեությունը, քանի որ խաղը առավելագույնս նպաստում է սոցիալական փորձի, սոցիալական դերերի և հարաբերությունների յուրացմանը: Ն/դ տարիքում էական փոփոխությունների է ենթարկվում երեխայի հուզական ոլորտը: Սոցիալական զարգացման ընթացքում զարգանում է նախադպրոցականի ինքնագիտակցությունը, սեփական վարքը գնահատելու կարողության ձեռքբերումը: Կարևորվում է մանկավարժական արդյունավետ մեթոդների, ճիշտ ընտրված ռազմավարությունների կիրառումը, երեխայի համակողմանի ուսուցման և զարգացման համար, որով էլ պայմանավորվում է թեմայի արդիականությունը:

Աշխատանքի հիմնական նպատակն է՝ համապատասխան գրականության վերլուծության օգնությամբ ուսումնասիրել ն/դ տարիքում, երեխաների հուզականային ոլորտը.

- Ի՞նչ մեթոդներով է այն գնահատվում,
- Որոնք են ն/դ տարիքի երեխաների հուզական և սոցիալական զարգացման հիմնական չափորիչները,
- Ն/դ տարիքի երեխաների հուզականային ոլորտի և միջանձնային հարաբերությունների ախտորոշման, հոգեբանական և մանկավարժական ինչպիսի գործիքներ կան,
- Ինչպիսի ազդեցություն է ունենում ընտանիքը՝ որպես առաջնային սոցիալական ինստիտուտ, և մանկավարժական հաստատությունները՝ որպես երկրորդային միջավայր, երեխայի զարգացման և հուզականային ոլորտի ձևավորման գործում, պահպանելով մանկավարժահոգեբանական առողջ մթնոլորտը:

**ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ՀՈՒՉԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՉԱՐԳԱՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ, ԾՆՈՂՆԵՐԻ ԳԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

**1.1. Նախադպրոցական տարիքի ընդհանուր հոգեբանական բնութագիրը**

Նախադպրոցական տարիքում ընդլայնվում են երեխայի սոցիալական շփումները, երեխան հիմնականում սկսում է հաճախել մանկապարտեզ, զարգանում են նրա ինքնուրույնությունն ու ինքնասպասարկման հմտությունները: Մեծ կարևորություն ունի դերասյուժետային խաղը, որի միջոցով երեխան ճանաչում է աշխարհը, յուրացնում սոցիալական դերերն ու հասարակության մեջ առկա կանոնները: Իմացական գործընթացները հիմնականում ոչ կամային բնույթ են կրում, երեխան հեշտությամբ շեղվում է, հիշում է այն, ինչ իրեն հետաքրքրում է [1]:

**Իմացական ոլորտ**

- Ուշադրությունը և հիշողությունը հիմնականում ոչ կամային բնույթ են կրում, սակայն խաղային գործունեության շնորհիվ աստիճանաբար սկսում են զարգանալ կամային ուշադրությունն ու նպատակաուղղված մտապահումը: Օրինակ՝ երեխան կարողանում է առավել երկար ժամանակ առանց շեղվելու կենտրոնանալ աշտարակ կառուցելու կամ տիկնիկին կերակրելու վրա:
- Մտածողությունն այս տարիքում ակնառու գործնականից դառնում է ակնառու պատկերավոր, որի շնորհիվ երեխան կարողանում է մտածել ոչ միայն առարկան տեսնելով, այլև դա պատկերացնելով:
- Ամբողջությամբ ձևավորվում է երեխայի խոսքը, ընդլայնվում է բառապաշարը:
- Շատ վառ զարգացած է այս տարիքի երեխաների երևակայությունը, ինչի արդյունքում նրանք հաճախ դժվարանում են տարբերել իրականը երևակայականից [1, էջ 41]:

**Հուզականային ոլորտ**

- Երեխան սկսում է ընկալել սեփական անձն առանձին, ինչի արդյունքում ձգտում է ավելի մեծ ինքնուրույնության, զարգանում են ինքնասպասարկման հմտությունները (ինքնուրույն ուտել, հագնվել, օգտվել սանհանգույցից և այլն):
- Եթե նախկինում երեխայի վարքն ավելի շատ կախված էր արտաքին պայմաններից, այս փուլում երեխան սկսում է որոշել, կարգավորել սեփական վարքը և հույզերը: Ձևավորվում է սեռային պատկանելիության գգացումը և դրան համապատասխան՝ սեռադերային վարքը: Այսինքն՝ երեխան սկսում է

հասկանալ, որ ինքը տղա է կամ աղջիկ, և կրկնօրինակել իր սեռի մեծահասակներին բնորոշ վարքը:

- Տվյալ փուլի ավարտին ձևավորվում են ինքնագիտակցությունը (սեփական անձի մասին պատկերացումների համակարգը) և ինքնագնահատականը: Վերջինիս ձևավորման հարցում առանցքային նշանակություն ունեն ծնողների կողմից երեխայի վարքին տրվող արձագանքները:
- Ձևավորվում է սեռային պատկանելիության գագաթումը և դրան համապատասխան՝ սեռադերային վարքը: Այսինքն՝ երեխան սկսում է հասկանալ, որ ինքը տղա է կամ աղջիկ, և կրկնօրինակել իր սեռի մեծահասակներին բնորոշ վարքը:
- Տվյալ տարիքային փուլին բնորոշ են որոշակի վախեր, անհանգստություններ: Առավել հաճախ հանդիպում են մթությունից, մենակությունից, փակ տարածությունից, հեքիաթի կամ մուլտֆիլմի հերոսներից, կենդանիներից վախերը: 5-6 տարեկանին մոտ երեխան կարող է հետաքրքրվել «մահ» երևույթով, դրա հետ կապված հարցեր տալ: Դրական պայմանների դեպքում այս վախերը տարիքային տվյալ փուլի ավարտին մեծ մասամբ անցնում են [1, էջ 41]:

### **Սոցիալական ոլորտ**

- Հիմնականում հենց այս տարիքում երեխան սկսում է առավել ակտիվ ներգրավվել սոցիալական միջավայրում, հաճախել մանկապարտեզ, շփվել հասակակիցների հետ, յուրացնել հասարակության մեջ ընդունելի վարքի ձևերը և այլն:
- Երեխայի համար շատ կարևոր նշանակություն է ձեռք բերում խաղը, հատկապես դրա դերայուժետային տեսակը, որի միջոցով նա վերարտադրում է մեծահասակների կյանքը, զարգացնում է կամքը, կանոններով խաղալու հմտությունները և այլ կարևոր հատկանիշներ: [1, էջ 40]:

Այսպիսով, ն/դ տարիքի ավարտին երեխան ձեռք է բերում ավելի մեծ ինքնուրույնություն, զարգանում են ինքնասպասարկման հմտությունները, խաղի և մեծահասակների հետ շփման միջոցով յուրացնում է ընդունելի վարքի ձևերն ու կանոնները, սովորում է ավելի լավ կառավարել իր վարքն ու հույզերը:

## **ԳԼՈՒԽ 2. ՀՈՒՉԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ Ն/Դ ՏԱՐԻՔՈՒՄ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

### **2.1. Ն/դ տարիքի երեխայի հուզականային ոլորտի զարգացումը սոցիալական միջավայրում**

Ընտանիքին բնորոշ են ճանաչողական, զարգացնող, սոցիալականացնող, տեղեկատվական, արժեքային, վարքի կարգավորման, դաստիարակչական, հաղորդակցման և այլ գործառույթներ: Ճանաչողական գործառույթի շնորհիվ ավագ սերնդի աշխարհաճանաչողության փորձը, կենսական պատկերացումները, նորմերը հաղորդվում են հաջորդ սերնդին [2]:

Երեխայի ճանաչողական և հուզականային ոլորտների զարգացման գործում մեծ ազդեցություն ունեն ընտանեկան ավանդույթները, միջսերնդային, ներընտանեկան փոխհարաբերությունները, ընտանիքի պատմությունը և բառապաշարը, խոսքային կառույցները, արտահայտչամիջոցները, ծնողի կամ մեծահասակի պահվածքը, սաստում, ոգևորում կամ արհամարհանք արտահայտող հայացքը, ժպիտը, ժեստերը [4]:

Մեծ է դաստիարակության դերը, մարդու ձգտումը դեպի ինքնուրույնություն: Վարքի կարգավորման ավտորիտար ոճը (ժխտական նախադասություններ, ժխտողական, պատժող և արգելող միջոցներ, ժխտական և հարկադրական քերականական կառույցներ՝ չի կարելի, պետք է, ստիպված ես, պարտավոր ես և այլն) ճանաչողական և հուզական-հոգեբանական մեծ ազդեցություն են ունենում երեխայի վրա [5]:

Խոսքային միջոցներով երեխայի հուզականային ոլորտի վրա ընտանիքի ազդեցության առումով հետաքրքիր է Գ. Կրայզի մոտեցումը, ըստ որի՝ ճանաչողական կարողությունների զարգացումը դիտարկվում է էթնոմշակութային տարբերությունների համատեքստում: Ըստ նրա՝ գերմանացի ծնողներին հատուկ է իրենց երեխաների հետ տիրական, առարկություններ չհանդուրժող տոնով խոսելը, մինչդեռ ամերիկացի ծնողներն ամենից առաջ ձգտում են բավարարել երեխաների ցանկություններն ու պահանջները: Այդ միտումների հիմքում ընկած սոցիալական արժեքները մասամբ փոխանցվում են մոդալ /եղանակավորող՝ պետք է, հարկ է/ բայերի միջոցով [5, էջ 384]:

Ավտորիտար ոճի դաստիարակությունը կամ գերուշադրությունը երեխայի գործողություններում, հաճախակի հանդիպող արգելքները կարող են հետագայում բերել մոտիվացիայի, ինքնուրույնության հետ կապված խնդիրների, խնդիրների լուծման դժվարության, սոցիալական միջավայրում ինքնաներկայանալու դժվարությունների: Մարդու վարքի բովանդակությունը մեծամասամբ կախված է սոցիալական

ինստիտուտների ազդեցության ձևից: Ընտանիքը, որպես առաջնային սոցիալական ինստիտուտ, հիմքն է հանդիսանում անձի հետագա աճի, դաստիարակության ինչպիսի միջոցներ են կիրառվում, արդյունավետ է դա, թե ոչ, ինչպիսի դիրքորոշումներ են ամրապնդվում երեխայի մոտ հետագայում, ինչպիսի ազդեցություն կարող է դա ունենալ [4]:

Դաստիարակության տարբեր ձևերի կիրառումը մեծ ազդեցությունը է ունենում երեխայի հետագա զարգացման վրա: Օրինակ, երբ ծնողը կիրառում է դաստիարակության՝ գերհոգատարությունը, գերխնամքը, <<Երեխան ընտանիքի կուռք>> դարձնելով՝ <<Դու պետք է լինես ամենալավը, ամենապատասխանատուն>>, այսինքն, տրվում է երեխային դիրքորոշումներ, ծրագրավորում են սցենարներ, և արդյունքում երեխան սկսում է ծնողների սպասելիքները անընդհատ արդարացնել, որպեսզի ստանա նրանց կողմից լավ վերաբերմունք: Երբ ծնողը, օրինակ, իր չիրականացած հնարավորությունները պրոյեկտում է երեխայի վրա, և երեխան չունենալով տվյալ ոլորտին համապատասխան ընդունակություններ՝ իրական հնարավորություններից, ընդունակություններից դուրս են, կարող են առաջանալ շատ խնդիրներ՝ օր. Ինքնագնահատականի անկում, տազնապայնության բարձր մակարդակ... Օր՝ <<Դու ամենալավն ես նկարում, արտասանում>>, այսպես, երեխան գնալով դպրոց, առաջին դասարանում, նրա ինքնագնահատականը չի տուժում, սակայն անցնելով ավելի բարձր դասարաններ, պարզվում է, որ երեխաներ կան, որ ավելի բարձր առաջադիմություն ունեն, սկսում է ինքնագնահատականը կրել փոփոխություններ՝ իջնել: Կարող է առաջանալ <<մոխրոտիկի բարդույթ>> [4]:

Այս փոփոխությունները տեղի են ունենում աստիճանաբար՝ սկզբում, նրանց ֆանտազիաներում թվում է, թե կիրականացնեն այդ պահանջները, բայց աստիճանաբար կորցնում են ուսման հանդեպ հետաքրքրությունը, անընդհատ զիջում, խուսափում են, քանի որ մանկության շրջանում ընտանեկան դաստիարակությունը բավարար չի լինում հաղթահարել այս խնդիրները, և արդյունքում դրսևորվում է հաջորդ տարիքային փուլերում: Կոնֆլիկտային ընտանիքների դեպքում, ևս առաջանում են տարբեր խնդիրներ երեխայի վարքում, ձեռք են բերում ծնողների կողմից տրված վարքի մոդելները, ներքնայնացնում՝ կարող է երեխան դրսևորել ագրեսիվ, տազնապային վարք, ունենալ հաղորդակցման, շփման խնդիրներ, և, կախված երեխայի անձնային առանձնահատկություններից, խառնվածքից, կարող է դառնալ դեպրեսիվ, ամաչկոտ, ագրեսիվ, տազնապային: Արտաքին կոնֆլիկտից անցում է կատարվում ներքին կոնֆլիկտի: Կամ, երբ երեխան փորձում է արդարացնել ծնողի սպասելիքները՝ <<լինի հնազանդ>>, կարող է բերել առողջական խաթարումների, ինչպես նաև պահանջումների

բավարարման դեպրիվացիայի: Եվ, կարող է թվալ, թե երեխան հարմարված է, հանգիստ, այնինչ, կարող է ունենալ բարդություններ [4]:

Ռիսկի գործոնների հաջորդ խումբը կապված է մանկական հաստատության հետ: Առաջին անգամ երեխան հանդիպում է օտար մարդկանց: Հետազոտությունները ցույց են տվել, որ դաստիարակը, սովորաբար, չի նկատում իրեն ուղղված երեխայի դիմումների 50 տոկոսը: Մա մի կողմից կարող է զարգացնել ինքնուրույնությունը, իսկ մյուս կողմից բացասաբար ազդել անվտանգության պահանջմունքի բավարարման վրա՝ առաջացնելով տագնապ և հոգետոմատիկ դրսևորումներ: Կարող են առաջանալ կոնֆլիկտներ նաև մանկական խմբերում [4]:

Հաջորդ ռիսկային գործոնը ծնողական ծրագրավորումն է: Մի կողմից այդ ծրագրավորման միջոցով երեխան յուրացնում է բարոյականության նորմերը, իսկ մյուս կողմից ձգտելով համապատասխանել ծնողների սպասումներին և արժանանալ նրանց սիրուն, սկսում է ձևավորվել ըստ Է.Բեռնի «հարմարված երեխա», որը սկսում է ապրել ուրիշի կյանքով, ճնշվում է նրա ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը, դառնում է անվստահ և տագնապային: Ծնողների մի մասը խրախուսում է երեխաների այդպիսի հակվածությունը, իսկ մյուս մասն, ընդհակառակը, ճնշում է այն՝ ամեն քայլափոխին արգելքներ հարուցելով երեխայի ինքնուրույն գործողությունների ճանապարհին: Ծնողների դաստիարակչական ավտորիտար, ինչպես նաև հակասական, անհետևողական ոճերը կարող են հանգեցնել ոչ միայն բնավորության թուլությունների, այլև պաթոլոգիական գծերի, ներոտիկ վիճակների: Մասնավորապես, կարող են էլ ավելի սրվել ընդգծված հոգեպաթոլոգիական գծերը, եթե երեխան այդպիսի ժառանգական նախահակվածություն ունի [4]:

Այսպիսով, մեծ է դերը սոցիալական ինստիտուտների, մասնավորապես ընտանիքի՝ որպես առաջնային սոցիալական միջավայր, անձի զարգացման, դաստիարակության գործում: Պետք է կարողանալ օգնություն ցուցաբերել ժամանակին, որպեսզի առաջադիմությունը պահպանվի երեխայի, քանի դեռ չի հասել վերջին՝ հուսահատության փուլին, և որ չկորցնի հավատը սեփական ուժերի հանդեպ: Կարևոր է վարքի արդյունավետ մոդելներ ցույց տալ երեխային, դրական ստիմուլներ, և համապատասխան երեխայի հնարավորություններին, կարողություններին, ընդունակություններին, տարիքային զարգացման փուլերին: Դաստիարակության տարբեր ոճերի կիրառումը (դեմոկրատական, լիբերալ, ավտորիտար) իր ազդեցությունն է ունենում երեխայի տարիքային զարգացման փուլերում: Տարբեր ծնողներ երեխաների բանիմաց և ինքնուրույն լինելու այդ հակվածության նկատմամբ ոչ միանման վերաբերմունք են դրսևորում:



**2.2. Ն/դ տարիքի երեխաների հուզական և սոցիալական զարգացման հիմնական  
չափորոշիչները**

❖ *Կրտսեր տարիքի երկրորդ խմբի` երեքից մինչև չորս տարեկան երեխաների  
զարգացման և կրթական չափորոշիչ*

<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈՒՉԱԿԱՆ ՈԼՈՐՏ</b>	
<b>Սոցիալական զարգացում</b>	
<b>Փոխհարաբերություններ մեծահասակների հետ</b>	
<i><b>Չափորոշիչ</b></i>	<i><b>Ցուցիչ</b></i>
1. Երեխան սկսում է շփվել ծանոթ մեծահասակների հետ և հաստատում է վստահության վրա հիմնված հարաբերություններ:	1) Ազատ հաղորդակցվում է ծանոթ մեծահասակների հետ: 2) Ընդունում է իր համար նշանակալի մեծահասակների (բարեկամների, հարևանների) ընկերակցությունը: 3) Խնդրանքի դեպքում օգնում է մեծահասակին:
2. Երեխան մասնակցում է խմբային գործունեությանը:	1) Մասնակցում է 5-10 րոպե տևողությամբ խմբային աշխատանքներին: 2) Ենթարկվում է հաստատված 3-4 կանոններին: 3) Նկատում է խաղընկերոջ բացակայությունը:
3. Երեխան լուծում է հասակակիցների հետ առաջացած վեճերը մեծահասակի օգնությամբ:	1) Դիմում է մեծահասակի օգնությանը հասակակցի հետ վեճը լուծելու համար:
4. Երեխան սկսում է ցուցաբերել ինքնակառավարման հմտություններ:	1) Հետևում է վարքի պարզ կանոններին: 2) Խնամքով է վերաբերվում իր համար կարևոր իրերին, խաղալիքներին: 3) Անցում է կատարում մի գործողությունից

	մյուսը՝ մեծահասակի օգնությամբ:
5. Երեխան սկսում է ցուցաբերել ինքնակառավարման հմտություններ:	1) Հետևում է վարքի պարզ կանոններին: 2) Խնամքով է վերաբերվում իր համար կարևոր իրերին, խաղալիքներին: 3) Անցում է կատարում մի գործողությունից մյուսը՝ մեծահասակի օգնությամբ:
<b>Հուզական զարգացում</b>	
7. Երեխան սկսում է ճանաչել հիմնական հույզերն ու զգացմունքները և իրավիճակին համապատասխան հույզեր դրսևորել :	1) Ապրումակցում է իր համար կարևոր անձանց հույզերին: 2) Արձագանքում է ուրիշների զգացմունքներն:

*❖ Միջին խմբի՝ չորսից մինչև հինգ տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչ*

<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈՒՉԱԿԱՆ ՈԼՈՐՏ</b>	
<b>Սոցիալական զարգացում</b>	
<b>Փոխհարաբերություններ մեծահասակների հետ</b>	
<i>Չափորոշիչ</i>	<i>Ցուցիչ</i>
1. Երեխան հեշտությամբ շփվում է ծանոթ մեծահասակների հետ:	1) Ներգրավվում է խոսակցության մեջ:
2. Երեխան ենթարկվում է մեծահասակների հետ շփման ընդունված նորմերին:	1) Մեծահասակի ուշադրությունը գրավում է համապատասխան գործողությունների կամ բառերի միջոցով:
3. Երեխան հեշտությամբ շփվում է իր հասակակիցների հետ:	1) Առաջարկում է իր օգնությունը ուրիշ երեխայի (երեխաների): 2) Ընդունում է հասակակիցների օգնությունը: 3) Ունի ընկերներ տարբեր շրջապատներում (մանկապարտեզում, բակում և այլն):

<p>4. Երեխան մասնակցում է խմբային աշխատանքների և խաղերի:</p>	<p>1) Մասնակցում է մեծ և փոքր խմբերով կազմակերպված 20-25 րոպե տևողությամբ աշխատանքներին:</p> <p>2) Ստեղծում և խաղում է դերային խաղեր:</p>
<p>5. Երեխան համագործակցում է հասակակիցների հետ:</p>	<p>1) Զննարկում է խաղի հետ կապված գաղափարներ:</p> <p>2) Իր խաղալիքները և նյութերը տալիս է ուրիշներին:</p> <p>3) Խաղի մեջ կատարում է դերաբաշխումներ:</p>
<p>6. Երեխան բանակցում է իր հասակակիցների հետ մեծահասակի օգնությամբ:</p>	<p>1) Հետևում է մեծահասակի առաջարկած տարբերակին իր հասակակցի հետ առաջացած վեճը լուծելու համար:</p> <p>2) Կոնֆլիկտային իրավիճակում հաշվի է առնում ընկերոջ կարծիքը:</p>
<p>7. Երեխան ցուցաբերում է ինքնակառավարման հմտություններ:</p>	<p>1) Հետևում է վարքի ընդունված կանոններին:</p> <p>2) Խնամքով է վերաբերվում խմբասենյակի և տան իրերին, խաղալիքներին:</p> <p>3) Անցում է կատարում գործողության մի տեսակից մյուսին մեծահասակի հիշեցումով:</p>
<p><b>Հուզական զարգացում</b></p>	
<p>8. Երեխան ճանաչում է հիմնական հույզերն ու զգացմունքները և իրավիճակին համապատասխան հույզեր է դրսևորում :</p>	<p>1) Անվանում է հիմնական հույզերը՝ ուրախություն, տխրություն, գայրույթ:</p> <p>2) Գիտի, թե ինչպիսի՞ իրավիճակներում են հիմնական հույզերը դրսևորվում:</p> <p>3) Դեմքի արտահայտությամբ և ձայնի ինտոնացիայով տարբերակում է հիմնական հույզերը՝ ուրախություն, տխրություն, գայրույթ:</p>

9. Երեխան դրսևորում է իրավիճակին համապատասխան հույզեր:	1) Ապրումակցում է ուրիշների հույզերին:
--	--

**❖ Ավագ խմբի՝ հինգից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչ**

<b>ՀՈՒՉԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ</b>	
<b>Սոցիալական զարգացում. փոխհարաբերություններ մեծահասակների հետ</b>	
<b>Չափորոշիչ</b>	<b>Ցուցիչ</b>
1. Երեխան իրեն շրջապատող մեծահասակների հետ կարողանում է կառուցել փոխադարձ վստահության և հարգալից վերաբերմունքի վրա հիմնված հարաբերություններ:	<p>1) Ինքն առաջինն է սկսում խոսակցությունը, հարցերով դիմում է ծանոթ մեծահասակներին՝ (հարևաններ, բժիշկ, խանութի վանառող և այլն):</p> <p>2) Հիմնական խնամակալների և իր համար նշանակալից այլ մեծահասակների հետ հարաբերություններ հաստատելիս վստահություն է դրսևորում:</p>
2. Երեխան անհրաժեշտության դեպքում դիմում է մեծահասակների օգնությանը	1) Հարցով դիմում է մեծահասակին կամ նրա ուշադրությունը հրավիրում է ինչ-որ խնդրի վրա:
3. Երեխան իր հասակակիցների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու փորձեր է կատարում:	<p>1) Առաջարկում է իր օգնությունը ուրիշ երեխայի (երեխաների):</p> <p>2) Ընդունում է հասակակիցների օգնությունը:</p> <p>3) Հետևում է ընկերների առաջարկներին խաղի կազմակերպման կամ ընթացքի վերաբերյալ:</p> <p>4) Տարբեր շրջապատներում (մանկապարտեզում , բակում) ունի ընկերներ:</p> <p>5) Իր համար կարևոր իրերը տալիս է ընկերոջը:</p>

<p>4. Երեխան կարողանում է բանակցել իր հասակակիցների հետ:</p>	<p>1) Կիրառում է կոնֆլիկտների լուծման տարբեր միջոցներ:</p> <p>2) Ուրիշ հասակակցի հետ առաջացած վեճը կամ կոնֆլիկտը փորձում է լուծել՝ բանակցելով, հաշվի առնելով ինչպես սեփական, այնպես էլ դիմացինի կարծիքները (երբեմն մեծահասակի օգնությամբ):</p> <p>3) Մեծահասակի օգնությամբ գնում է փոխզիջման:</p> <p>4) Ցուցաբերում է իրադրությանը ուրիշի տեսանկյունից նայելու պարզագույն ունակություն:</p>
<p>5. Երեխան իր վարքի և դրա ազդեցության վերաբերյալ իմացություն է ցուցաբերում:</p>	<p>1) Նկարագրում է, թե ինչպես իր գործողությունները կարող են ազդել ուրիշների զգացմունքների և վարքի, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա:</p> <p>2) Ցուցաբերում է հոգատար վերաբերմունք՝ ակնկալելով դրական արձագանք:</p> <p>3) Հասկանում է ինչպիսի արձագանքի կարող է արժանանալ իր և ուրիշների վարքը:</p>
<p>6. Երեխան մեծահասակների և հասակակիցների նկատմամբ ցուցաբերում է իր տարիքին համապատասխան բարեկիրթ վարքագիծ:</p>	<p>1) Գործածում է բարեկիրթ բառեր և դրսևորում է բարեկիրթ վարքագիծ:</p>
<p><b>Հուզական զարգացում</b></p>	
<p><b>Չափորոշիչ</b></p>	<p><b>Ցուցիչ</b></p>
<p>7. Երեխան ճանաչում է հիմնական հույզերը և զգացմունքները, դրսևորում է իրավիճակին համապատասխան հույզեր:</p>	<p>1. Հիմնական զգացմունքները կարողանում է արտահայտել բառերով և ոչ-բառային հաղորդակցության ձևերով:</p> <p>2. Մարդկանց դեմքի արտահայտությունից, ձայնի հնչերանգից և վարքի այս կամ այն դրսևորումից ճանաչում է հիմնական հույզերը:</p> <p>3. Դրսևորում է ապրումակցում ուրիշների հույզերին:</p>

[9]:

**ԳԼՈՒԽ 3. Ն/Դ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՒՉԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԵՎ ՄԻՉԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ**

**3.1. Ձեռնոցներ**

**Նպատակը`** համագործակցելու, փոխօգնության կարողության ստուգում, երեխայի հաղորդակցական կարողության մակարդակի ստուգում:

**Անհրաժեշտ նյութեր`** թուղթ, գունավոր մատիտներ:

**Ընթացքը`** թեստավորումն իրականացվում է երկու երեխաների հետ: Տարբեր թղթերի վրա նկարում ենք ձեռնոցներ և երեխաներին նախապես ասում, որ դրանք մեկ գույգ են, այսինքն պետք է նույն տեսքն ունենան և խնդրում ենք ներկել: Երեխաներին տալիս ենք երկու տուփ միանման մատիտներ: Թեստավորման երկրորդ տարբերակում երեխաներին տալիս ենք ընդամենը մեկ տուփ մատիտ, զգուշացնելով, որ պիտի կիսվեն միմյանց հետ մատիտներով:

**Արդյունքների գնահատում`** Վերլուծում ենք երեխաների համագործակցելու կարողությունը. *1. Երեխաները կարողանում են փոխհամաձայնության գալ, ընդհանուր որոշում կայացնել, ի՞նչ միջոցներ են օգտագործում` համոզում են, ստիպում են... 2. Ինչպե՞ս են իրականացնում փոխադարձ վերահսկողությունը, 3. Արդյո՞ք առկա է փոխօգնություն, 4. Արդյո՞ք կարողանում են ռացիոնալ կերպով օգտագործել միջոցները* [3, էջ 72-73]:

**Երեխաների հետ իրականացված աշխատանքի օրինակ.** Խաղը իրականացվել է երեք երեխաների հետ. նկար 1 նկար 2 նկար 3



Ինչպես տեսնում ենք առաջին և երրորդ նկարներից, երեխաները կարողանում են փոխհամաձայնության գալ, ընդհանուր որոշում կայացնել, խաղի իրականացման ժամանակ հաղորդակցվում էին միմյանց հետ արդյունավետ և համագործակցում, կատարելով առաջադրված խնդիրը, ստանալով միանման ձեռնոցներ: Իսկ երկրորդ գույգը, ով մասնակցեց խաղին, ավելի քիչ էր համագործակցում, չկար կոնֆլիկտ, սակայն շփումը և հաղորդակցումը պասիվ էր: Կարելի է իրականացնել երեխաների հետ խմբային և անհատական խաղեր, ուղղված հաղորդակցման և շփման ոլորտին, սեփական և միմյանց հույզերը հասկանալուն, փոխօգնությանը, խմբում ինքնաներկայանալու, ինքնադրսևորվելու հմտությունների զարգացմանը, հուզական ինտելեկտի բարձրացմանը:

### 3.2. Ութ գույն ունեցող ծաղիկը

**Նպատակը՝** երեխայի՝ ընտանիքի անդամների հետ ունեցած հարաբերությունների ախտորոշում

**Անհրաժեշտ նյութեր՝** կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, մանուշակագույն, շագանակագույն, մոխրագույն և սև թերթիկներ ունեցող ծաղիկ, որի մեջտեղում սպիտակ շրջան է:

#### **Հրահանգ**

- Ընտրի՛ր այն թերթիկը, որը քեզ ամենից շատն է դուր գալիս
- Ընտրի՛ր այն թերթիկը, որը նման է մայրիկին
- Հայրիկին
- Եղբորդ/ քույրիկիդ
- Պապիկիդ
- Տատիկիդ

#### **Արդյունքների վերլուծություն**

**Դեղին** - «միասին, իրար մոտ» - երեխայի համար չափազանց կարևոր անձնավորություն, ով բավարարում է երեխայի սիրված և ընդունված լինելու պահանջմունքը: Երեխան հուզական կախվածություն ունի տվյալ անձից, նա իր համար հանդես է գալիս որպես հեղինակություն:

**Կարմիր** - «ակտիվ փոխներգործություն» - ուրախ, ակտիվ մարդ է, որը, սակայն, երեխայի հետ ոչ այդքան կայուն հարաբերությունների մեջ է:

**Կապույտ** - «մոտ, բայց ոչ միշտ միասին» - երեխան ձգտում է ամեն կերպ խուսափել այս մարդու հետ կոնֆլիկտներից, կան համատեղ հետաքրքրություններ, խաղեր:

**Կանաչ** - «հույս» - այս մարդը բավարարում է երեխայի պաշտպանված լինելու պահանջմունքը:

**Մանուշակագույն** - երեխան կարծես անտեսում է այս մարդուն, սա ընտանիքի այն անդամն է, որը, կարծես, չի խառնվում ընտանիքի գործերին և երեխայի համար հեղինակություն չի:

**Շագանակագույն** - չար պահանջկոտ անձնավորություն, ով հաճախ անարդարացիորեն պատժում է երեխային:

**Մոխրագույն**- չկա հուզական կապ, այս մարդը երեխային հաճախ քննադատում է, ավելի շատ մտածում է իր մասին:

**Սև**- ագրեսիվ է երեխայի հանդեպ, հնարավոր է, որ անգամ ֆիզիկական բռնություն է ցուցաբերում երեխային: Երեխան կոնֆլիկտ ունի տվյալ անձի հետ [3, էջ 73-75]:

### 3.3. Թիթեռներն իմ ստամոքսում (Լ.Լոուենշթեյն)

**Նպատակը** – երեխային անհանգստացնող խնդիրների, վախերի բացահայտում:

**Ընթացքը** - Երեխային պատմում ենք, որ բոլոր մարդիկ հաճախ ունենում են խնդիրներ և անհանգստություններ, որոնք տարբեր ձևերով դրսևորվում են մեր օրգանիզմում, օրինակ, երբ մարդը վախենում է, սիրտը սկսում է արագ աշխատել, կամ, երբ տխուր է, լաց է լինում, կամ նրան կարող է թվալ, որ կոկորդի մեջ քար է կանգնած, այնուհետև հարցնում ենք երեխային, թե արդյոք նա երբևէ լսել է «ստամոքսի մեջ թիթեռներ կան» արտահայտությունը: Օրինակ, երբ մարդն ինչ -որ բանից անհանգստանում է նրա ստամոքսում ինչ- որ բաներ են կատարվում, կարծես այնտեղ թիթեռներ լինեն, բայց դե իրականում այնտեղ թիթեռներ չկան:

Հետո երեխան մի մարդուկ է նկարում, և երեխային տարբեր չափսերի թիթեռներ ենք տալիս (թիթեռները կարող են միասին պատրաստել): Ներկայացնում ենք, որ դրանք կարծես երեխայի խնդիրներն ու անհանգստությունները լինեն՝ մեծ կամ փոքր: Երեխան այդպես յուրաքանչյուր թիթեռի վրա գրում է, կամ պատմում, թե որ խնդրին է նման այդ թիթեռը, այնուհետև իր նկարած մարդուկը «կուլ է տալիս» այդ թիթեռներին՝ երեխան սուսինձով դրանք ամրացնում է մարդուկի ստամոքսում: Կարող ենք ընթացքում լրացուցիչ հարցեր տալ՝ երեխայի խնդրին ավելի լավ ծանոթանալու նպատակով: Տեխնիկան թույլ է տալիս, որ երեխան առանց կաշկանդվելու խոսի իր խնդիրների մասին, նաև հնարավորություն է տալիս որոշել, թե երեխայի որ խնդիրներն են առավել առաջնային՝ մեծ թիթեռներ, և որոնք՝ երկրորդային՝ փոքր թիթեռներ [3, էջ 77-78]:



### 3.4. Կյանքի քարտեզ

**Նպատակը`** երեխայի գաղտնի հույզերի, ապրումների բացահայտում

**Ընթացքը`** երեխային առաջարկում ենք թղթի վրա 4 շրջան անել: Նա պետք է այդ շրջանների մեջ նկարի իր կյանքի 4 ամենակարևոր դրվագները: Նկարելուց հետո սկսվում է նկարի քննարկման փուլը: Երեխան պետք է պատմի այդ իրադարձությունների ընթացքում իր ունեցած հույզերի մասին:

Տեխնիկան կարող է իրականացվել 2 փուլով.

- ✓ Առաջին փուլում երեխան դա անում է առանց ծնողի ներկայության
- ✓ Երկրորդ փուլում ծնողը ներկա է գտնվում և հնարավորություն ենք ունենում վերահսկել այն, ինչ երեխան ծնողի ներկայությամբ փորձում է այլ ձևով ներկայացնել, թաքցնել ծնողից [3, էջ 76-77]:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ❖ Երեխան պետք է սովորի հասկանալ իր հույզերն ու զգացմունքները և պատմի ծնողին դրանց մասին, ուստի անհրաժեշտ է զարգացնել նրա հուզական ինտելեկտը: Դա սեփական հույզերն ու զգացմունքները ճանաչելու, դրանք կառավարելու, ինչպես նաև այլոց զգացմունքները հասկանալու ունակությունն է:
- ❖ Թույլ տվեք երեխային ապրել իր հույզերը և մի արգելեք, քանի որ ճնշված հույզերը չեն անհետանում, այլ երեխայի մոտ ստեղծում են տազնապներ, անհանգստություններ, ճնշվածություն, ագրեսիա: Չկան վատ կամ լավ հույզեր, կան տհաճ և հաճելի հույզեր, ցանկացած հույզ ինչ-որ իրավիճակում կարող է օգտակար լինել:
- ❖ Ցույց տվեք երեխային՝ ինչպես արտահայտել հույզերը և պատմելով ցույց տվեք, որ նա կարող է արտահայտել իր հույզերը տարբեր միջոցներով:
- ❖ Ապրումակցեք, ընդունելով երեխայի զգացմունքները:
- ❖ Բացատրեք ու առաջարկեք տարբերակներ՝ ծագած իրավիճակի լուծման համար: Արդյունավետ կլինեն իրականացնել նաև երկխոսելու օրինակներ երեխայի հետ, որի միջոցով կստեղծվի անվտանգ միջավայր, երեխան կսովորի ավելի լավ հասկանալ ինքն իրեն ու շրջապատը, ինչպես նաև կզգա ձեր աջակցումն ու ըմբռնումը:

Այս ամենի միջոցով, երեխան, համոզվելով, որ մեծահասակը պատրաստ է նրան լսել, կարողանում է կիսվել իր մտքերով ու զգացմունքներով, վստահում և դիմում է ծնողին բարդ իրավիճակում, ինչպես նաև սովորում է ինքնուրույն գտնել խնդրի լուծումը, քանի որ մենք չենք պարտադրում նրան սեփական խորհուրդներն ու որոշումները: Երեխան սովորելով լսել մյուսներին, կկարողանա արդյունավետ փոխհարաբերություններ հաստատել:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, սկսած կյանքի առաջին տարիներից, հատկապես երբ երեխան սկսում է քայլել և խոսել, նրանում դիտվում է ինքնուրույն, բանիմաց, կարող անձ լինելու ուժեղ հակում: Նա ցանկանում է մասնակցել մեծահասակների գործերին, ինքնուրույնաբար կատարել այն ամենը, ինչ ցանկանում է: Տարբեր ծնողներ երեխաների բանիմաց և ինքնուրույն լինելու այդ հակվածության նկատմամբ ոչ միանման վերաբերմունք են դրսևորում:

Այնուամենայնիվ, սկզբում անհույս թվացող ամենաբարդ իրավիճակներն անգամ լուծվում են, երբ ծնողները ժամանակ ու ջանք են ներդնում՝ փորձելով հետևողականորեն կիրառել գիտակցված, դրական ծնողավարման՝ այստեղ նկարագրված նոր մոտեցումներն ու հմտությունները: Անշուշտ, ամեն հմտության և մեթոդի հիմքում ընկած է ծնողի կողմից երեխային անվերապահ սիրելու և ընդունելու սկզբունքը: Ծնողի հետ ունեցած ներդաշնակ փոխհարաբերությունները երեխայի հետագա զարգացման կարևորագույն հիմնաքարերն են:

Այսպիսով, անհրաժեշտ է և՛ մանկավարժների և՛ ծնողների կողմից, հետևել ուսուցման հիմնական սկզբունքներին երեխայի զարգացման ընթացքում, ստեղծելով այնպիսի հնարավորություններ, որոնք կնպաստեն երեխայի սոցիալական փոխներգործություններին՝

- Հաշվի առնել երեխայի զարգացման իրական հնարավորությունները,
- Ապահովել անհրաժեշտ բարդություն, որպեսզի ուսուցման գործընթացում ստեղծվի հավասարակշռություն, և արդյունավետ կլինի, երբ նոր գիտելիքի ձևավորումը տեղի ունենա նախորդ փորձի հիման վրա,
- Աշխատել հասկանալ, թե ինչպես է մտածում երեխան, թույլ տալ, որպեսզի երեխան ձեռք բերի և դրսևորի ինքնուրույնություն՝ ինքնուրույն մտածելու, սեփական մտքեր և տեսակետներ առաջադրելու կարողություն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբեկյան Լ., Վարդանյան Ա. - Գիտակցված ծնողավարում արտակարգ իրավիճակներում. ձեռնարկ ծնողների համար, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան, «Ծնողի դպրոց» ՀԿ, 2020թ.
2. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հատոր 4, -Եր.: «Հայպետհրատ», 1963, -684 էջ:
3. Խուրդյան Ա., Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց: Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար.- Եր.: ՎԵԼԱՍ Պրինտ ՍՊԸ., 2018.- 188 էջ:
4. Նալչաջյան Ա.Ա., Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, -Եր.: Լույս, 1991, -512: 4.
5. Крайг, Грэйс Психология развития / Грэйс Крайг, Дон Бокум: науч. ред. пер. Т. В. Прохоренко. - 9-е изд. - Санкт-Петербург: Питер, 2018. - 939 с.
6. Ларри Хьел, Дениел Зиглер Теории личности. М., 2011. 608 с.
7. Обухова Л. Ф. / Детская (возрастная) психология / Учебник. - М., 1996, - 374с.
8. Пиаже Жан. / Психология интеллекта. – СПб.: Питер, 2003. - 192с.
9. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575>Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին: